Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՎԻԹԱՊ

ԵՒ

ՈՒՐԻՇ ԶՐՈՅՑՆԵՐ

№ 15

ԳԻՆՆ Է 5 ԿՊԵ.

Հրատարակութիւն
ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅԱՍԱՐԱԿՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փողոց 15.
1901

5222
13 APR 2011
891.99
Կ-31
Բ. Գ. Ս. Հայոց Հոգևոր Դպրոց Էկեղ.-Ծխակ. (Օրիորդաց)
106 - 5/II 39

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՎԻՇԱՊ

ԵՒ

ՈՒՐԻՇ ԶՐՈՅՑՆԵՐ

1001/4433

№ 15

Հրատարակութիւն
ԹԻՖԼԻՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հ.Ս.Խ.Հ. Հայրենական Գրադարան Ս. Սեան

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադաթեան փողոց 15.
1904 (71)

60067

28 SEP 2013

Дозволено Цензурою, 29 Апрѣля 1904 г. Тифлисъ

Հայկական Հանրագիտարանի Հրատարակչություն (Օրիորդաց)

ՎԻՃԱԳ

I

Վաղուց, երևի դարերից 'ի վեր, այդ մաքուր և յորդառատ ջուրը, որ բղխում էր լեռներից—գնում էր ոռոգելու ստորոտի դաշտերը, դարձնելով նրանց հարուստ անտառներ, պարարտ, արդիւնաբեր արտեր և գեղածիծաղ մարգագետիններ։

Քաղաքի նմանող մի գիւղ ծաղկում էր ջրի ափերին։ Ծառաստան ու այգի զարդարում էին նրան. երկիրը լի ցընծութեամբ, արտադրում էր շատ բարիք և մարդիկ երջանիկ էին այնտեղ, հաւասարապէս վայելելով ջրի բաշխած հարստութիւնը, ճաշակելով նրա արդիւնքը։

Վաղուց, զուցէ դարերից 'ի վեր էր, որ այդ մաքուր ու յորդառատ ջուրը ոչ ցամաքում էր, ոչ դադարում, ոչ էլ պակասում։ Գարնան յորդանում

էր, մի քիչ պղտորուում, սակայն տարուայ ամեն եղանակին կար նա, հոսում էր անընդհատ, խաղում ափերի հետ, ոռոգում նրանց։

Բայց դա երկար չը տևեց։

Մի օր էլ յանկարծ խուլ յուզում առաջացաւ նրա ափերի վրայ։ Մարդիկ իրար անցան, խմբուեցին, ափը գնելու իջան և սիրտը դող եղած՝ վճռեցին, որ ջուրն սկսել էր նուազել։ Թէև սակաւ առ սակաւ, բայց արագ կերպով նուազում էր, ափերը թողնում և բոլոր արտերին ու մարգերին ոռոգելու չէր հասնում։

Նկատուել էր այդ։ Այդպէս եթէ գնար, մի քանի տարուց յետոյ ջուրը ոչ միայն կէս կարող էր լինել, այլև գուցէ բոլորովին դադարէր։

Եւ այն ժամանակ ինչ պիտի լինէր գիւղացիների դրութիւնը։ Չէ՞ որ արդէն սկսում էին չորանալ արտերը, բերքը նուազել. այդիները, ջուր չ՚ունենալուց, պաղակել-խամրել էին, ծառաստանները կորցնում էին աճելու ոյժը և մարգագետիններն այլ ևս չէին ժպտում առաջուայ պէս՝ իրենց թաւշանման շքեղ տարածութեամբ։

Ամբողջ երկիրը ոչնչանալու էր սպառնում։ Պէտք էր մի ճար մտածել, ջրի սպառուելու դէմն առնել։

Բայց դրա համար, ամենից առաջ, հարկաւոր էր նոր փորձանքի պատճառը որոնել և գտնել։

Եւ հաւաքուեցան գիւղացիք խորհրդի, յետոյ բաժանուեցին, լեռները ելան նախ ջրի ակունքը գտնելու և ապա՝ այն ամեն ճիւղերը հետազօտելու, որոնցից գետը առատանում էր և մեծանում։

Մեծ գետ էր այն։ Բուն ակը բղխում էր մութ, խոժոռ ժայռերով բերնաւորուած լեռան կրծքից. ճանապարհին մօտ 4—5 տեղ, զանազան սարերից գալով՝ խառնուում էին նրա հետ խոշոր վտակներ և լեռնաշղթայի ստորոտում, խոր ձորակի մէջ այդ բոլորը միացած՝ գնում էին ողողելու ներքին դաշտերը։

Գիտէին այդ գիւղացիների խմբերը, որոնք հետազօտութեան ելան։

Մի խումբը բռնեց ակունքի ճանապարհը, միւսը ձորը մտաւ, մտածելով, որ գուցէ լեռներից մի խոշոր ժայռ գլորուել—փակել էր ընթացքը և փոխել

նրա հեղեղատը։ Երրորդ խումբը քայլեց գլխաւոր ճիւղն 'ի վեր դէպի լեռնաշղթայի ծործորները և երկու միւսները բահերով ու թիերով զինուած՝ գնացին մաքրելու միւս ճիւղերի ակունքը, ենթադրելով, որ լցուել էին նրանք աւազով և կամ փուխը բլրակներ փլած՝ լցրել էին նրանց։

Երկար, դաշտի բնակիչները լուրերի սպասելով՝ միւս կողմից նկատում էին, որ ոչ միայն ջուրը չէր մեծանում, այլ աւելի և աւելի էր պակասում։

Խմբերից շատերն այդ միջոցին, յոգնեցուցիչ, տաժանելի ճանապարհներով քայլեցին վտակներն 'ի վեր։ Ո՛չ մի հողաթումբ չէր փլել, ոչ մի ժայռ չէր գլորուել, ջրերի հեղեղատները չէին փոխուել։ Միայն նկատեցին, որ նոյն իսկ վտակները փոքրացել էին. իսկ թէ որտեղ էր անհետանում ջուրը կամ ինչպէս, ինչ ճանապարհով—ոչ ոք իմանալ չը կարողացաւ։

Ու տասնեհինգօրեայ մեծ շրջագայութիւնից յետոյ, բոլոր խմբերը կետրոնացան ակունքի մօտ և խորհրդի նստան։

—Ակներև է. ասաց մէկը.—ջրերը

պակասում են գետերից. բայց թէ ինչպէս կամ ուր են գնում—մենք այդ իմանալ չը կարողացանք։

—Ինձ թւում է, խօսեց մի ուրիշը, —որ վտակների տակ անդունդ է գոյացել և կլանում է ջրերը։

—Պտոյտներ պիտի լինէին կամ որևէ այլ նշան, առարկեց մի երկրորդը. —մինչդեռ ոչ մի այդպիսի նշան չը կայ, որքան մենք կարողացանք ուշադրութեամբ հետազօտել։

—Այո՛, չը կայ. բայց կայ այն փաստը, որ ջրերը կլանւում են և մի ամբողջ հասարակութեան ծարաւ թողնում։

—Գուցէ անյայտ չարագործներ, ստորերկրեայ, վարպետութեամբ շինուած ճանապարհներով գողանում են նրանց. յայտարարեց մի փորձառու գիւղացի։

—Այդպէս բանի նշանն էլ չը կայ։

Եւ երկար վիճում էին, թեր ու դէմ կարծիքներ, զանազան ենթադրութիւններ առաջադրում։ Առաջարկում էին երազային, երեխայական, առժամանակեայ միջոցներ, սակայն իսկոյն գըտնում, որ դրանցից ոչ մէկը երկարատև

չէր կարող լինել և եթէ նոյն իսկ յաջողէին մի տարի, հակայական ոյժ գործ դնելով ջուրը ամբարել, դաշտերին բաւականացնել — այնուամենայնիւ ջուրը պակասում էր և կարող էր լիովին դադարել։

Եւ երբ այդպէս տաք վէճի մէջ էին, յանկարծ մի երիտասարդ, որ յայտնի էր հայրենակիցների մէջ որպէս այլանդակ մտքեր արտայայտող, ֆանտազեօր և խենթ, գոչեց այն կողմից.

—Լսեցէք թէ ինչ կասեմ ձեզ, եղբայրներ... Մեր ջրերը կլանողը ոչ այլ ինչ է—եթէ ոչ՝ մի վիշապ, որ բուն է դրել այդ լեռներում և հետզհետէ սպառում է մեզ կեանք տուող աղբիւրները... Մի վիշապ է այդ...

Բարձրացաւ ընդհանուր քրքիջ. յետոյ ծաղրի կարկուտ թափուեց խենթի գլխին։ Բայց սա անվրդով՝ գոչում էր անդադար և հետզհետէ աւելի հաստատուն ու վճռական.

—Կրկնում եմ ձեզ, եղբայրներ. մի վիշապ է այն, որ մտել է մեր լեռների մէջ. շուտով եղած ջուրն էլ կը չորացնի և պիտի տեսնէք, կլանելով պիտի մեծանայ, ծարաւը պիտի աճի, խմելու

փափագը պիտի աւելանայ և այլ ևս ջուր չը գտնելով, պիտի գայ մեր արիւնը խմելու...

Այդպէս խօսեց խենթ մարդը և նրա եղբայրները ոչ միայն ծաղրեցին, այլ և նախատեցին նրան, ջանացին լռեցնել, յետոյ ապտակեցին, ծեծեցին և խստիպեցին, որ դադարէր յիմարութիւններ ասելուց։

Բայց նա գոչում էր յամառութեամբ.

—Վիշապ է այն, եղբայրներ, ասում եմ ձեզ. քանդեցէք ակունքը և կը տեսնէք, հետազօտեցէք,խորքերը մտէք և պիտի հասկանաք... Ծնել է նա, այս ես եմ ձեզ ասողը, կարճամիտ եղբայրներ... և ծնել է նա մեր միջից, մեզանից է ծնել...

—Մեզնից է ծնել, գոչեց բարկացած գիւղի իշխանը.— ասում ես՝ մեզնից... Խենթ, ասա տեսնենք, մի յիմարութիւն էլ ասա և յայտնիր մեզ թէ ինչ կին է այն, որ վիշապ է ծնում և կամ որտեղից, ինչու ծնաւ նա։

Ու ծիծաղում էին. որովհետև ոչ ոք չէր լսել, որ մարդկանցից կարող էր վիշապ ծնել և այդ վիշապը, մի ամբողջ

գետ կլանելուց յետոյ, կարող էր ելնել և մարդկանց արիւնը խմելու գալ։

—Խօսիր, գոչեցին գիւղացիք խենթին.—տեսնենք, գուցէ քո մայրն է ծնել այդ երևակայական վիշապին, եթէ միայն նրան ծնողը քո հիւանդ ուղեղը չէ։ Խօսիր, ինչից է ծնել նա։

—Ձեր քրտինքից... մրմնջաց խենթը և այնուհետև այլ ևս չը խօսեց։

Եւ ինչու՞ խօսէր. միմեանց ետևից միայն այլանդակութիւններ էր ասում։—«Քրտինքից ծնած վիշապ»—դա մի այնպիսի խենթային միտք էր, որ հաւերի ծիծաղն անգամ կը շարժէր, ինչ ճնաց խելքը գլխին, փորձառու, շատ բան տեսած գիւղացիների և պատկառելի իշխանների...

II

Ահա այդպէս էր, որ վիշապի գոյութեան միտքը ծնաւ մարդկանց մէջ։ Թէև ջուրն արդէն կէս էր եղել և սպառնում էր շուտով մի առուակ դառնալու, սակայն գիւղացիք շարունակեցին ծիծաղել երևակայական վիշապի վրայ և ջրի նւազելը համարում էին բնական ո և է պատճառի արդիւնք։

Բայց «խենթը մի քար գլորեց, հազար խելօք չը կարողացան հանել»։ Այդպէս էլ եղաւ։ Վիշապի միտքը—որքան և խելօք մարդիկ ծաղրեցին—մեծացաւ, համակեց ժողովրդի պակասամիտ դասի միտքը։ Տասնեակ տարիներ յետոյ, երբ մեծ ջուրը այլևս մի չնչին առուակ էր դարձել, երբ ծաղկած քաղաքի նմանող գիւղը կէս էր եղել և գեղածիծաղ այգիները, դաշտերն ու մարգերը չորացել էին, գտնւում էին խենթանման մարդիկ, որոնք վիշապին համարում էին ջրի պակասելու, ոչնչանալու մեղաւորը։

Քիչ կար, իրաւ է, բայց կար։ Որ և է գաղափար շուտ չէ մտնում ամբոխի մէջ, բայց երբ մտնում է, շուտ չէ դուրս գալիս։

Գտնուեցան մարդիկ, որոնք վերջ 'ի վերջոյ վճռեցին գնալ դէպի ակունքը, փորել, խորը մտնել և ստուգել վիշապի գոյութիւնը և եթէ կար նա—սպանել և մեռնող երկիրը նորից կենդանացնել, նրա անցեալ եռուն կեանքը նորից աճեցնել։

Իսկ խենթը, որ դեռ կենդանի էր, որ դեռ պնդում էր վիշապի գոյութեան մասին, յանձն առաւ նրանց գլուխն

անցնել և երկիրը հարստահարողի դէմ կռուի ելնել։

Ու ամբողջ գիւղը հետևեց նրանց։ Ոմանք—որովհետև գնացողների հայրերը կամ եղբայրներն էին և շատերը՝ որովհետև այդ հետաքրքրութիւնը շատ հետաքրքիր էր։

Եւ գնացին որոնողները երկար, օրերով ու շաբաթներով, հասան ջրի գլխաւոր ակունքին—խոժոռ լեռների, մեծ ժայռերի ստորոտը։ Ցետոյ բահերն ու բրիչները ցած դրին և նստեցին ծրագիր կազմելու։

Երբ խենթը տեսաւ, որ մարդիկ նստում են ծրագիր կազմելու, կանգնեց նրանց մէջ և ասաց.

—Օ՛, ոչ, եղբայրներ. մի՛ նստէք հանգստանալու, քանի դեռ վիշապը կենդանի է. մի՛ ժողովէք երկար՝ ծրագիրներ կազմելու։ Հարցը շատ պարզ է. ծնել է վիշապը, որ կլանում է մեր ջուրը և մեզ թողնում ծարաւ։ Պիտի պեղել նրա եղած տեղը և նրա գլուխը ջախջախել։ Սրանից պարզ ու կտրուկ միջոց չը կայ... Ոտքի՛ ելէք և գործի սկսենք...

—Բայց չէ՞ որ, ասաց մէկը,—հար-

կաւոր է հաշուի առնել մեր ոյժերը, տեսնել թէ կարող ենք ջախջախել վիշապին. գուցէ նա շատ մեծ և զօրեղ է և մեզ բոլորիս կարող է կլանել...

—Օ՛, այո՛, ասաց խենթը.—երբ նա նոր էր ծնել՝ նրան սպանելը շատ աւելի հեշտ էր. բայց նա ահա երկար ապրեց, մնաւ մեր ջրով. այժմ նրա ստամոքսը աւելի մեծ, կլանող բերանը աւելի լայն է դարձել և շատ դժուար է նրան ոչնչացնել առանց զոհեր տալու, առանց արիւն թափելու։

—Տեսնում ես, խօսեց մի գիւղացի.—ուրեմն մեզ՞ աւելի երկար պէտք է խորհել, ծրագիր կազմել, կռուելու պատրաստուել այդ հրէշի դէմ։

—Այո, բայց մինչ դուք կը խորհէք և ծրագիրներ կը կազմէք, նա կը զօրեղանայ, ամբողջ ջուրը կը կլանէ և մեզ բոլորիս ծարաւ կը թողնէ։ Նա աճում և զօրեղանում է ժամ առ ժամ, նոյն իսկ րոպէ առ րոպէ։

—Ի՞նչ արած, առարկեցին շատերը.—պիտի խորհել, մտածել...

Ու շարունակեցին խորհել, մտածել...

Մնաց խենթը մենակ։ Նրան չը

լսեցին, նրա շտապեցնելը ծիծաղելի դատն։

Եւ նա մենակ, առաւ բրիչն ու բահը, իջաւ լեռների խորքերը և փնտռեց վիշապին։

Ու գիւղացիք հեռու նստած, խորհում էին և ժպիտը դէմքին՝ դիտում խենթի աշխատութիւնը։

—Եթէ իսկապէս հրէշը կայ, ասում էր մէկը,—անպատճառ, իր շնչովն անգամ լինի, վայրկենապէս կը ոչնչացնի այդ խենթին։

—Ծիծաղելի կը լինի տեսնել թէ ինչ այլանդակ դէմք պիտի ստանայ խենթը, դէմ առ դէմ գալով վիշապին։

Իսկ խենթը փորում էր, աշխոյժով փորում։ Նրա բրչի հարուածից դղրդում էր լեռը, թնդում գետինը։ Եւ ժայռերի խորքում լսում էր խուլ մռնչիւն, որ քանի խենթի հարուածները արագանում էին, այնքան մեծանում էր։

—Հրէշն է... գունատ և դողդոջուն՝ գոչեցին գիւղացիք ետ ետ գնալով։

—Զգոյշ լինենք, խրատեց մէկը.—աւելի լաւ է հեռու կանգնենք և նախ տեսնենք թէ ինչպէս կը վարուի խենթի հետ...

—Մի պատառ կանի, դիտեց երկրորդը։

—Մի վայրկենում կը յոշոտի. չէք լսում թէ ինչ ձայներ են լսւում խորքերից։

Եւ իրաւ, մռնչիւնը սաստկանում էր, զայրալից դառնում։

Հրէշը բարկանում էր, որ համարձակւել էին այդպէս խորերը մտնել և իրեն անհանգիստ անելու դալ։

Բայց խենթը պեղում էր. նրա բրիչը ժայռեր էր դէս ու դէն նետում, քարեր գլորում և սուր ծայրովը խոր մղւում մինչև հրէշի բնակարանը։

Եւ այսպէս, մինչև երեկոյ, առանց դադար առնելու, փորեց խենթը, պեղեց, բրչի հարուածներ տւաւ։

Եւ երբ երեկոյ էր դարձել—վերջին կարծր քարն էր ջարդում նա և նրա ականջները դրեթէ խլացել էին տակից դուրս նետւող վիշապի օռնոցներից։

Գիւղացիք սարսափած, գունատ և սրտատրոփ՝ հեռւից նայում էին այդ բոլորին և ոչ ոք սիրտ չ'արաւ մի քայլ անելու, խենթին օգնութեան ձեռք տալու։ Ամեն ոք իր կաշւից էր վախենում,

ամեն ոք կամենում էր վտանգից հեռու լինել, թէկուզ ծարաւ, թշւառ ու կիսամերկ մնալ միշտ։

Եւ երբ բրչի մի ուժգին ու ծանր հարւածի տակ գլորւեց վերջին ժայռը, ահաբեկ գիւղացիների առաջ երևան եկաւ հրէշի այլանդակ, սոսկալի գլուխը, որ բերանը դէմ էր տւել բոլոր ջրերին և անկշտում կլանելով, ուռում էր—հաստանում։

Իսկ եթէ դեռ հոսում էր քիչ ջուր, դա էլ նրա բերնից, շրթունքների անկիւններից դուրս ելնող թափցուքն էր միայն, խառն հրէշային գարշ լորձիւնքի հետ։

Հրէշը երբ տեսաւ բրիչը ձեռքին՝ իր գլխի վերևը կանգնած խենթին—մռնչաց, կովային աչքերը ոլորեց զայրալից և գոչեց որոտաձայն.

—Հեռու, յանդուգն, թէ չէ՝ կը ոչնչացնեմ.... Քեզ նման խենթերի ես շատ եմ կուլ տւել այն ժամանակւանից 'ի վեր, երբ առաջին մարդը ճնշեց իր եղբօրը, խլեց նրա ունեցածը. երբ Կայէնը սպանեց Աբելին... Գնա, քանի չեմ փոշիացրել քեզ, անմիտ... Քեզ նման խենթերը թէև գտնում են ինձ, բայց

նրանք չեն կարող ոչնչացնել, այլ միմիայն ահա այդ ամբոխը, որ այժմ ահաբեկ՝ դողում է ոտքերիս առաջ...

Եւ շարունակեց կլանել ջուրը։

Խենթը բարձրացրեց բրիչը, ուժգնութեամբ օրօրեց և բուռն թափով նետեց դէպի հրէշի գլուխը։

Բրիչը սուլեց, գնաց քիչ քերթելու գազանի գլխի կաշին, բայց աւելի ուժգնութեամբ կպաւ կողքի ժայռերին, ջարդոտեց նրանց և հեռւում դիտող գիւղացիներից շատերին վիրաւորեց։

Այդ որ տեսան գիւղացիք, զայրացան, յուզւեցին, յետոյ խմբւեցան, քարեր վերցրին և քարկոծեցին խենթին։

Իսկ հրէշը մի մեծ քրքիչ արձակեց և ասաց.

—Տեսաք, մարդիկ. տեսաք, որ այդ խենթերը ինձ դէմ կռւելով՝ միմիայն ձեզ են վնասում։ Քարկոծեցէք այդ տխմարներին. ձեր թշնամիներն են, ձեզ մոլորեցնողներն են դրանք... Մինչդեռ ես եմ ձեզ կերակրողը, ձեր բարերարը... և որովհետև եկել էք այժմ ինձ խնդրելու, ահա խոստանում եմ, որ էլ աւելի բարի կը լինեմ դէպի ձեզ, ծարաւ չեմ թողնիլ, որովհետև շրթունքներս

1001
ԱՄԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

անկիւն ունին և անկիւններից ձեզ բաւականացնելու, ձեզ ծարաւութիւնից չը մեռցնելու ջուր թափւում է...

Եւ գիւղացիք դողալով՝ լսեցին հրէշի այդ բարեսիրական խօսքերը։ Քարկոծեցին, լեռների բարձունքները քշեցին խենթին, յետոյ ծունկ չոգած՝ շնորհակալ եղան հրէշից և ուրախ՝ վերադարձան գիւղը։

—Խոստանում եմ,—աւելացրել էր հրէշը,—ձեզ ծարաւ չը պիտի թողնեմ և շրթունքներիս անկիւնները քիչ աւելի կը բանամ, երբ դուք չափազանց ծարաւութիւն զգաք...

Ու այդ խոստումը, պիտի խոստովանուել, մեծ ազնուութեամբ կատարում է նա մինչև այսօր։—Շրթունքները երբեմն քիչ աւելի է բաց անում, մեղմացնելու համար այն ծարաւիներին, որոնք տառապանքներից պատրաստ էին խենթանալ...

Այդ օրւանից ամբոխը պաշտում է հրէշին, որպէս բարերարի, շինում է նրա համար տաճարներ, իսկ նրա դէմ խօսող խենթերին՝ քշում դէպի լեռների բարձունքները...

—

Այստեղ կը վերջանար արդէն զրոյցը, եթէ պէտք չը լինէր մի դէպք ևս պատմել։

Այդ այն է, որ մի օր յայտնուեցան մարդիկ, որոնք երազ էին տեսել՝ թէ մօտ է, իբր թէ, հրէշի ոչնչանալու օրը և թէ նրանք երազի մէջ տեսել էին հրէշն սպանողին անդամ։

Ու նկարագրում էին այդ սպանողին, որ իբր թէ մի հուժկու մարդ էր կաշէ գոգնոցով, կոշտացած խոշոր ձեռքերով և ձեռքին մի մեծ կռան...

Պատմում էին այդ երազատեսները, որ իբր թէ կաշէ գոգնոցով հսկան մեծ քայլերով գնում էր դէպի հրէշը, և որ վիշապը, լսելով նրա քայլերը, կծկըւում էր և ճգնում աւելի խորը մտնելու... Կարծես վախենում էր...

—

1903 թ.

ԿՈՐՍԻԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ.

Մի անգամ Արդարութիւնը անհետացաւ յանկարծ։

Ասենք, նա յաճախ էր կորսւում։

Խուսափելով իրեն ծիւրող, պատն 'ի պատ խփող, լկող անձերից, յաճախ նա փախնում էր լեռները, պահւում աշխարհիս հեռաւոր անկիւններում։ Բայց ամեն անգամ, այսպէս կամ այնպէս, յաջողւում էր նրան գտնել, բռնել, վանդակի կամ մնդուկի մէջ դնել, ուզածին պէս գործածել... չարչարել։

Այս անգամ սակայն, չը գիտեմ ի՞նչ հնարքով, Արդարութեանը յաջողւեց լաւ անհետանալ. այնպէս լաւ թագնւեց, որ մարդիկ աղօթքով, եզիտութեամբ, ոյժով կամ ոսկով իսկ անկարող եղան նրան գտնելու։

Սկսւեց մեծ իրարանցում։ Առանց Արդարութեան դժւար էր ապրել. մանաւանդ, որ նրա անհետանալով, բազմանում էին մարդկութեան «օգտակար»

շատ հաստատութիւններ և շատ աղտոտութիւններ, որպիսիք են— կեղծաւորութիւն, անիրաւութիւն, խաբէութիւն, արիւնհեղութիւն և այդպիսի շատ այլ թոյներ, որոնց այնքան լաւ դիմակաւորում էր Արդարութիւնը։

Եւ ահա Արդարութիւնը փնտռելու ելաւ նախ մի պատերազմիկ—ազնւական։ Շատ զօրք ժողովեց, վաշտ ու գունդ կազմեց և երդւեց, որ Արդարութիւնը որ ծակը մտած լինէր, պիտի հանէր և ձեռքն ու ոտը կապած՝ պիտի մէջ տեղ բերէր։

Այդ պատճառով իսկ, ոտնակոխ տալով նա գիւղ ու քաղաք, արիւն սրփռելով դաշտ ու ձոր, ջարդեց, սրամաշ արաւ ամեն ինչ, տակն ու վրայ դարձրեց ամեն բնակութիւն, և այդպէս առաջ էր գնում, յուսալով բռնել Արդարութիւնը։

Նրանից յետոյ ճանապարհ ընկաւ Արդարութիւնը որոնելու մի շատ հարուստ—մեծատուն։ Ոսկի ու արծաթ, զարդ ու զարդարանք բարձեց ուղտերի և վստահ իր ոսկու վրայ, տնից դուրս եկաւ։ Ասում են, որ մի քանի հատ էլ

սիրուն կանայք վերցրեց, որ ոսկու փայլի վրայ՝ գեղեցկութեան հրապոյրն էլ աւելացնէր։

—Կը տեսնէք, պնդում էր նա,— Արդարութիւնը ոսկով պիտի գնեմ, կանանցով պիտի գրաւեմ և սնդուկիս մէջ դրած՝ մէջ տեղ պիտի բերեմ։

Այդպէս էր ահա, որ Բռունցքն ու Ոսկին գնացին Արդարութիւնը որոնելու... և դեռ գնում են։

Թող գնան։

Տեսնենք այժմ, թէ ո՞վ էր այն երրորդ անձը, որ խեղճ ու կրակ, ցնցոտիք հագին, ճակատը վշտերով խորխոր ակօսած, մտածեց ելնել Արդարութիւնը որոնելու։

Ասենք, ազնուականը սուր ունէր, հարուստը՝ ոսկին. իսկ սա ինչ ունէր, ինչո՞վ պիտի գտնէր Արդարութիւնը։

Թշուառն էր դա։ Բոլոր ընծաների փոխարէն էլ, տարածն էր մի չնչին սրուակ, որ ամուր կերպով սեղմել էր կրծքին և յամառութեամբ ճանապարհ ընկել։ Բանն այն է, որ սրուակը լցրել էր մի չը լսուած հեղուկով։ Որբից՝ մի արցունք, ընկածից՝ մի հառաչ, գործա-

ւորից՝ մի դառը քրտինք... մի խօսքով, վշտերի արցունքներից մի մի կաթիլ ժողոված, լցրել էր շիշը, պինդ փակել և կարծում էր թէ տարածը անշուշտ պիտի գրաւէր Արդարութիւնը։

Ու քայլում էր։ Անցնելով մեծ-մեծ քաղաքներից, խուլ հեռաւոր գիւղերից, քայլում էր անխոնջ, ձորեր ցած իջնում, լեռն 'ի վեր ելնում, ամեն քայլափոխին էլ կանգ առնելով՝ կանչում.

—Ո՞ւր ես, Արդարութիւն։

Արդարութիւն չը կար, ոչ երևում էր, ոչ էլ ձայն տալիս։

Անօթի, ծարաւ, յոգնած, վշտալից, երկար թափառեց թշուառը ամեն ուղղութեամբ, սրտի վրայ սեղմած ունենալով սրուակը, որի հեղուկը սկսել էր եռալ և տաքանալ։ Արդարութիւնը սակայն չը խղճաց նրան էլ. ոչ երևաց և ոչ էլ գոյութիւնը յայտնեց։

Վերջապէս, երբ յուսաբեկ, ուժասպառ՝ հասել էր լեռան կատարին, նրատեց մի ժայռի վրայ և սկսեց մտածել, թէ իզուր էր Արդարութիւն որոնելը, քանի որ նա խուսափում էր թշուառից անգամ։

Եւ երբ այդպէս մտածեց, բարկացած հանեց ծոցից սրւակը ու խփեց Ժայռին.

—Գնա՛ ոչնչացի՛ր, գոչեց նա, իզուր են բոլոր վշտերն ու արցունքները. Արդարութիւնը թշւառին չէ՛ սիրում...

Բայց հաղիւ թէ սրւակը փշրւել էր, որ լսւեց մի ահեղ որոտում, հոսած արցունքներից թանձր ծուխ բարձրացաւ, փրփրաց, ոլորւեց և նրա միջից, ահաբեկ թշւառի առաջ դուրս ցցւեց մի ահեղ հսկայ։

Սարսափած թշւառը ընկաւ երեսի վրայ...

—Ելի՛ր, կանչեց հսկան մեծաձայն. ելի՛ր և մի վախենալ։

—Ո՞վ ես դու, ահեղ ոգի, հարցրեց թշւառը։

—Ե՞ս, գոչեց հսկան,—ես բողոքն եմ, որ ծնայ այդ թափած արցունքներից և որ պիտի աշխարհ բերեմ անհետացած Արդարութիւնը... Նայի՛ր...

Ապա, արշալոյսի կարմրորակ լոյսի մէջ, ցցւեց հսկայի վեհ հասակը, դարձած դէպի բարձրութիւնները, ուր սկսել էր մի փոթորիկ և ուր գետինն ամբողջ դողում էր դղրդիւնով։

Եւ հեռուն, հսկայի պարզած ձեռքի կողմը, մի կոյտ մաքուր ամպերի բացւածքից, երևան եկաւ թագնւած Արդարութիւնը—խորունկ, տխուր հայեացքով, առանց կշեռքի, առանց մեծ սրի։

—Ե՛կ, Արդարութիւն, կանչեց Բողոքը—ես ծնւել եմ և իմ ձայնը թող քեզ համար կշեռք ու սուր դառնայ. ե՛կ, Արդարութիւն...

Բայց Արդարութիւնը անշարժ ու տխուր նայեց նրան, նայեց թշւառին և ասաց։

—Դեռ ո՛չ... դեռ դու փոքր ես, գնա՛ քայլի՛ր, կուտակի՛ր արցունք, կուտակի՛ր վշտեր, մեծացի՛ր որպէս ովկեան, կատաղի՛ր որպէս հեղեղատ և այն ժամանակ միայն ես կը գամ իմ սրով և իմ կշիռով...

Ապա ամպը սահեց և Արդարութիւնը նորից անհետացաւ իր անմատչելի բարձրութեան մէջ...

Այդ օրից ահա, պատերազմիկ զօրեղը արիւնի մէջն է որոնում Արդարութիւնը, հարուստն՝ իր ոսկու և թշւառը, նստած իր վշտերի մօտ, իր արցունքներով մեծացնում է Բողոքին, որ նա վերակոչէ աշխարհում՝ կորսւած Արդարութիւնը...

1902 թ.

ԸՄԲՈՍՏԻ ՄԱՀԸ

Անտառը յուզված էր, յուզված մեծապէս։

Խուլ, աճեցուն, զայրագին մի շըշուկ գրաւել էր նրան։ Հսկայ կաղնիներ բուռն շարժումով կռանում էին դէպի հացիներ. թեղին ու լորին վրդովուած՝ շշնջում էին։ Թփերն անգամ, անճոռնի բաղեղներով գալարուած, ոտները ճահճի մէջ, գաղջ հողի վրայ պառկած՝ անհանգիստ էին... Անտառն ամբողջ յուզուած էր։ Անսովոր մի դէպք էր տեղի ունենում այդ բազմադարեան ճահճային աշխարհում, ուր ծառերը մինչև այդ՝ աճում էին, մեռնում, ուռում էին, ապրում, դիջութեան մէջ բորբոսնում, պարագիտներով լեցուում, բաղեղներով կաշկանդուում և ուր բոլորը գոհ էին, ոչնչի չէին ձգտում։

Բայց ահա մի օր ծառերից մի քանիսը պատռել էին ամեն պատուտակ,

անցել ամեն ճահիճ և արմատները, փոխանակ ըստ վաղեմի աւանդութեան, դէպի ձորն ի վար իջեցնելու, սկսել էին դէպի լեռն ի վեր պարզել։ Այդ անսովոր էր, խիստ անբնական և անտառն ամբողջ իզուր չէր յուզել։

Ի՞նչ... արհամարհել պապենական սովորութիւնը, թողնել ճահիճն ու ձորը, ճգնել ազատուելու պատուտակներից և որ գլխաւորն է՝ դէպի լեռը մագլցել։ Ինչի՞ նման էր այդ։

Նոր ծառերը սակայն, անվրդով, անզգայ կարծես այդ բոլոր յուզման՝ անցել էին գիջութիւնը, անցել գծուած սահմանը, գնում էին դէպի վեր՝ ոստնելով ժայռերի վրայից, արհամարհելով արգելքները, պատռելով հողի կուրծքը, և, որը առաւելն է, այդ ամբողջ նոր ճիւղաւորութեան ծայրում սկսել էր ծընել մի առողջ, առոյգ և հպարտ ոստերով ծառ, որ վեհութեամբ նայում էր արևին, իր ոտների մօտ փուած հին անտառին և իր հպարտ շարժումով՝ կարծես ծաղրում էր ճահճի մէջ ապրող հին ընկերներին։

—Դարձէք, խելայեղներ. գոչում էին հները։

—Խենթացել են. գոռում էին կաղնիները։

—Կ'ոչնչանան. շշնջում էին թփերը։

—Իսկ նոր ծառը բարձրանում էր, անյագ բարձրանում և բոլոր այդ աղմուկի վրայ ժպտում ու զարճանում։

—Բայց այդ ուր ես գնում, մոլորուած, կանչեց վերջապէս մի հսկայ կաղնի.—ինչ գործ ունիս այդ բարձրութիւնների վրայ, ուր տիրում է սառնամանիք, ուր քամին սոսկալի է, ուր ջուր չկայ և ուր ժայռերը կոշտ են, ճանապարհը դժուար...

—Բարձրանում եմ, ժպտաց նոր ծառը։

—Բարձրանում ես, ապշեց մեծ կաղնին.—խենթ, ինչ կայ բարձրանալու մէջ, եթէ ոչ՝ միմիայն կորուստ։ Աւելի լաւ չէ՞ որ իջնես դէպի ձորը, գետակի ափին՝ ուր ստուեր կայ, առատ ջուր, սննդարար հող և ուր քամին անզօր է, կայծակն՝ անհասանելի...

—Բարձրանում եմ. յամառեց ծառը և մի ըոպէ իսկ կանգ չառաւ։

—Դու կ'ոչնչանաս! կանչեցին ծառերը։

—Բարձրութեան վրայ...

—Կայծակին զոհ կը լինես!

—Լեռների ծայրին...

—Դու անօթի կը մնաս, ծարաւ, պապակուած!

—Բայց բարձր կը լինեմ...

Ու բարձրանում էր, անյագ բարձրանում։

Անտառը ամբողջ այժմ լուռ, դողդոջուն, դարձած դէպի բարձրացող ծառը, սրտատրոփ դիտում էր նրա քայլերը, ուրախանում նրա յաճախ ապարդիւն ճիգերի վրայ, չարամտօրէն ժըպտում, երբ նա մի խոշոր ժայռի դէմ էր առնում և նենգամիտ, կծու խօսքեր նետում, երբ ծառը պապակուած ու յոգնած՝ կանգնում էր շունչ առնելու և կամ երբ քամին զօրեղ տարուբերում էր նրան այս-այն կողմ, ծռում՝ գետնին էր քսում, կամ տերևներն ու ճիւղերը միմեանց խառնելով՝ գլխին դիզացնում...

Փչում էր քամին, այրում էր արևը, անձրևն ու հեղեղները թրջում էին նրան, ամպերը գլխին որոտում, փոթորիկը նրան ժայռէ ժայռ խփում, կայծակը նրա շուրջը շանթիչ գծեր պարզում... և սակայն ծառը յամառ, ան-

դրդեալի՝ ելնում էր ելնում, և մշուշոտ, բարձր կատարների ձգտում...

Եւ երկար, երկար տանջելուց յետոյ, կէս ճղակոտոր, տերևները կորցրած, յոգնած, ուժասպառ, խաղալիկ քամիների, որոտումների տակ, կայծակի գծերի մէջ, անձրևներով թրջուած՝ հասնում էր բարձր կատարը։ Այժմ նա մշուշին ցած էր թողել իր՝ ճահիճների մէջ մնացած ընկերներին ծածկելու։ Այժմ նա արևին էր տարածում իր թեւերը, բայց այժմ քան երբէք՝ նա մենակ էր, անընկեր, հեռու գետակից, հեռու ձորակից։

Եւ չէր ափսոսում։ Այդտեղ, բարձրութեան վրայ հանգչած՝ զմայլում էր հեռաւոր հորիզոնով, փայլուն արևի տակ ողողուած լեռների կատարներով։ Անձրևը նրան ջուր էր տալիս, լեռան հողը՝ սնունդ։ Այդտեղ նա երազում էր իրենից մի նոր, բարձր կանգնած սերունդ ստեղծել, բռնել կատարը, արևի լոյսին մօտ լինել, ամպերի խոնաւութիւնից հեռու կենալ և ճահճային պատանդանից միշտ ազատ մնալ։

Իսկ ցածի անտառը նայում էր դեռ

նրան ծիծաղելով, նայում էր մենաւորին, խենթուկին ու ասում.

—Կ'ոչնչանայ. կայծակը կը փշրի նրան, քամիները կը կործանեն յանդուգնին...

Գալիս էին քամիները, փշրում նրա ճիւղերը, ցրիւ տալիս տերևները. գալիս էր անձրև, մերկացնում նրա ոտը, ճկուն արմատները հեղեղների տակ ողողում. գալիս էր և կայծակը, աղմկում, վիժում, շրջակայ ժայռերը ցնցում, այս-այն թփիկն այրում—սևացնում և գոչում ծառին։

—Յանդգնուդն, ուր ես եկել ինձ մօտ, կ'այրեմ քեզ։

—Այրէ՛ր, ասում էր ծառը.—կ'այրւեմ այստեղ, բայց կ'այրւեմ բարձրութեան վրայ...

Այդպէս էլ եղաւ։

Մի չարագուշակ փոթորկալից գիշեր քամիները ճղակոտոր արին նրան, հեղեղը մերկացրեց նրա արմատները և այրող, նախանձոտ կայծակը եկաւ վրժժալով ու ծառի կրծքին խփեց...

Ծառը բռնկեց, սկսեց այրւել։

—Այրւում է!... քրքջաց ներքևից ճահճային անտառը։

—Նրա վերջն այդ էր. ասում էին թփիկները։

—Տեսար, յանդուգն արարած, կանչեց մեծ կաղնին—մեռնում ես այժմ ահա...

—Բարձրութեան վրայ!.. մրմնջաց ծառը։

Եւ խոր ու խաւար գիշերւայ մէջ, նրա բոցը փայլում էր հեռուից՝ մի կրակոտ աստղի նման—նա ճարճատում էր, ծուխ-մուխ արձակում, իր մահը խընկում. մահ այդքան շքեղ, այդքան բարձր. և հողը նրա շուրջը կարծես տեղ էր բաց անում, ընդունելու իր ծոցի մէջ նրան, որ բարձրի՛ ձգտեց և բարձրութեան վրայ էլ մեռաւ...

1901 թ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI 1922
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0363866

60067

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹԱԽՄԱՆ ԳԻՇԵՐ, պատմ. գրոյց Լէօի. 2-րդ տպ. (սպառուած) . 5 կ.
2. 26 ՏՂԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՋԻԿ, վէպիկ Մախսիմ Գորկիյի. թարգ. Մուշէ վարդապետի . . . 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ գրոյցներ, Վ. Փափազեանի (սպառուած) . . 10 կ.
4. ԿԵՆՔԻՆ ԴԱՄԸ. պատմուածք Ա. Սամուելեանի. 2-րդ տպագր. . . 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԾԱՂԻԿ. Նովելլա, էլ. Օժէկոի թարգմ. Ս. Շահվերդեանի . 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ, վէպիկ Շիրվանզադէի . 15 կ.
7. ԵՂՕՒ ՓՇՈՒ ԲԱԽՏԸ, պատմուածք Շահբիարի (սակաւաթիւ) . . 3 կ.
8. ԵԱՊՕՆԻԱ, (հանաստ տեսութիւն) Խ. Խաչատրեանի . . . 3 կ.
9. ԴԱՆԿՕԻ ՍԻՐՏԸ, Մակսիմ Գորկիյի, թարգ Ա. Աթայեանի . . 3 կ.
10. ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մակսիմ Գորկիյի թարգ. Ա. Աթայեանի . . 10 կ.
11. ՄԵԾ ՓԱԿԱՆՔ և ԱՈՒԻԾԻ ՄԱՀԸ Վ. Փափազեանի . . . 3 կ.
12. ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՅ, Վ. Փափազեանի . . 4 կ.
13. ԽԵԼՕՔ ԱՔԱՂԱՂՆԵՐ ԵՒ ԴՐԱԽՏԸ, Վ. Փափազեանի . . . 5 կ.
14. ՍԻՐՈՑ ՀՈՎԻՏԸ, Ա. Աթայեանի . 3 կ.
15. ՎԻՇԱՊ և ուրիշ գրոյցներ, Վ. Փափազեանի . . . . 5 կ.

Վաճառվում են՝ Թիֆլիս՝ կենտրոնական, Գուատէնբերգ և Կովկասեան, Բագու՝ «Մատրուզնիկ», Երեւան՝ «Արարատ», Աստրախան՝ «Գ[illegible] ընկ.» գրավաճառանոցներում, և Եւրոպ[illegible] Բարիեանի մօտ։

Доз. Ценз. 19 Декабря 1904 г. Тифлисъ.

891.99
Կ-31